534

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

«21» 01 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0001-22

Ձեռնարկողը՝ ***«Է3 Թի Էմ Էս Սոլյուշնս» ՍՊԸ***
Երևան, Հանրապետության Հրապարակ Վ. Սարգսյան 26/3 գրասենյակ 713

Գործունեությունը՝ ***«Թեղուտ» ՓԲ ընկերության լեռնահարստացման կոմբինատում առաջացող թափոնների պահման/տեղադրման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝

Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 10 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0001-22
<21> 01 2022թ.

«Թեղուտ» ՓԲ ընկերության տարածքում առաջացող թափոնների պահման/տեղադրման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Թեղուտ» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/ նախագծային փաստաթղթեր
Տեղադրման վայրը՝	Լոռու մարզ, Շնող համայնք

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 3-րդ կետի ա) ենթակետի՝ թափոնների պահման/տեղադրման նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Ներածական մաս "Թեղուտ" ՓԲ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/ մշակել է "Թեղուտ" ՓԲԸ լեռնահարստացման կոմբինատի (այսուհետ՝ "Կոմբինատ") արտադրական գործունեության ընթացքում առաջացող թափոնների պահման և տեղադրման սույն ծրագիրը, որով կանոնակարգվում է թափոնների կառավարման ենթակառուցվածքների և գործողությունների հաջորդականությունը և միտված է թափոնների ոլորտի ՀՀ օրենսդրական պահանջների, ինչպես նաև միջազգային լավագույն փորձի և Կոմբինատի ներքին ընթացակարգերի ու կարգավորումների պահանջների կատարմանը: Ընկերության թափոնների կառավարման համակարգի կարևորագույն բաղադրիչն է՝ Կոմբինատի արտադրական գործունեությունից առաջացող արտադրության և սպառման թափոնների պահման և տեղադրման տեղամասերի/պահեստների առկայությունը: Կոմբինատի տարածքում կազմակերպված են թափոնների պահման և տեղադրման պահեստներ, որտեղ առանձնացված և անվտանգ պահվում/տեղադրվում են Կոմբինատի գործունեությունից առաջացած թափոնները, որոնց մի մասը պարբերաբար (ապրանքային խմբաքանակ ձևավորվելու դեպքում) փոխանցվում են մասնագիտացված/լիցենզավորված ընկերություններին՝ իրացման, վերամշակման կամ վնասազերծման համար: Որոշակի տեսակի թափոններ, մասնավորապես՝ բանեցված սնդիկային լամպերը երկարաժամկետ տեղադրվել են Կոմբինատի թափոնների պահման/տեղադրման պահեստներում՝ ՀՀ տարածքում դրանց վերամշակմամբ զբաղվող լիցենզավորված ընկերությունների բացակայության պատճառով: Նշված թափոնների պահման/տեղադրման տեղամասերը սույն ծրագրով չեն դիտարկվում և չեն հանդիսանում ՇՄԱԳ հաշվետվության առարկան: Հարկ է նշել, որ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից 2021 թվականի հունիսի 15-ին տրված շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացության (ԲՓ 0104-21) հիման վրա Ընկերությանը 30.07.2021 թվականին տրամադրվել է "Բանեցված

սնդիկային լամպեր, լյումինեսցենտային և սնդիկ պարունակող խողովակներ և խոտան" և "Կարծրացած տարասեռ պլաստմասսաների խառնուրդների թափոններ" վտանգավոր թափոնների գործածության՝ թիվ ՎԹ 0013-21 լիցենզիան:

Նկարագրական մաս Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Կոմբինատի տարածքում, որը գտնվում է Լոռու մարզի Շնող համայնքի վարչական սահմաններում: Կոմբինատի կազմում ներառված են՝ բացահանքը և հարստացուցիչ ֆաբրիկան: Ընկերությունը բաց եղանակով շահագործում է Թեղուտի պղնձմոլիբդենային հանքավայրը: Կոմբինատի աշխատանքային ռեժիմն է՝ 340 աշխատանքային օր, օրը 24 ժամ, 3 հերթափոխային գրաֆիկով, հերթափոխի տևողությունը՝ 8 ժամ: Կոմբինատում աշխատում է 1044 մարդ: Կոմբինատը տարեկան արդյունահանում և վերամշակում է 7.0 մլն.տ քանակությամբ հանքաքար: Պատրաստի խտանյութի քանակը կազմում է՝ պղինձի խտանյութ 63000 տ/տարի, մոլիբդենի խտանյութ 760 տ/տարի:

Հիմնական արտադրական ստորաբանումներն են.

- Խոշոր ջարդման բաժանմունք,
- Մանրացման բաժանմունք,
- Լրաջարդման տեղամաս,
- Ռեագենտների պատրաստման տեղամաս,
- Ֆլոտացման բաժանմունք,
- Խտացման և զտման տեղամաս,
- Մոլիբդենի խտանյութի չորացման տեղամաս,
- Պղնձի խտանյութի չորացման տեղամաս:

Օժանդակ ստորաբաժանումներն են.

- Ավտոհավաքակայաններ,
- Մեխանիկական արտադրամաս,
- Էլեկտրամատակարարման տեղամաս,
- Կաթսայատուն,
- Փայտամշակման տեղամաս,
- Պահեստներ,
- Ջրամաքրման կայաններ,
- Ավտոլցակայան,
- Անալիտիկ լաբորատորիա,
- Թափոնների պահեստարաններ և այլն:

Պոչամբարը՝ պոչային տնտեսությամբ:տեղակայված է Խառատաձոր գետի կիրճում (770 մ ծ.մ.), ֆաբրիկայից 0.35 կմ հեռավորության վրա:

Հանքային մարմինը մշակելու համար ընդունված է միակողանի, ընդերքայնական ընթացքաշերտերով, խորացող մշակման համակարգ՝ մակաբացման ապարները արտաքին լցակույտեր տեղափոխումով: Ելնելով լեռնային զանգվածի ֆիզիկա-մեխանիկական հատկություններից, փխրուն ապարների արդյունահանումը կատարվում է առանց նախապատրաստման, իսկ ժայռային մակաբացման ապարների և հանքաքարի արդյունահանումը նախատեսվում է կատարել նախնական փխրեցումից հետո: Ապարների նախնական փխրեցումը կատարվում է հորատապայթեցման աշխատանքների օգնությամբ, հորատանցքային լիցքերի կիրառմամբ:

Գործող կոմբինատի օբյեկտների տակ հատկացված տարածքը արդեն իսկ խախտվել է լեռնակապիտալ, շինարարական և հանքարդյունահանման աշխատանքների ժամանակ: Կոմբինատի տարածքում արդեն իսկ առկա են թափոնների պահման/տեղադրման պահեստները և սույն նախագծի իրականացնումը չի նախատեսում հաղածածկ և բուսածածկ տարածքների լրացուցիչ խախտում:

Ընկերության լեռնահարստացման կոմբինատում առաջացող թափոնների պահման/տեղադրման գործունեության համար դիտարկվել և Կոմբինատի կողմից

հատկորոշվել են այլընտրանքային տարբերակներ, որոնցից բնապահպանական տեսանկյունից ընտրվել է սույն ծրագրով առաջարկված տարբերակը:

"Թեղուտ" ՓԲԸ-ի գործունեության արդյունքում առաջանում են 20 տեսակի արտադրության և սպառման թափոններ, որոնց պահումը/տեղադրումը իրականացվում է Կոմբինատի 4 տարբեր հրապարակներում կազմակերպված թափոնների պահեստներում, որոնք տեղաբաշխված են ըստ հետևյալ հրապարակների՝

1. Հրապարակ №1 - Ներքևի ավտոհավաքակայան, որի տարածքում կազմակերպված են բանեցված անվադողերի, կապարե կուտակիչների և յուղերի պահեստները:
2. Հրապարակ №2 - Ընդհանուր բաց հրապարակ, որի տարածքում կազմակերպված են Կոմբինատում առաջացող մետաղաջարդոնի և շինարարական աղբի պահեստները:
3. Հրապարակ №3 - Հարստացուցիչ ֆաբրիկա, որի տարածքում կազմակերպված են բանեցված յուղերի, բանեցված սնդիկային լամպերի, դատարկ պարկերի և պլաստմասե թափոնների պահեստները:
4. Հրապարակ №4 - Հանքային տեխնիկայի ավտոհավաքակայան, որի տարածքում կազմակերպված են բանեցված յուղերի, կապարե կուտակիչների, անվադողերի և յուղի զտիչների, ինչպես նաև դատարկ տակառների պահեստները:

Թափոնների պահման/տեղադրման վերը թվարկված 4 հրապարակները և դրանցում կահավորված պահեստները կազմակերպված են այնպես, որ կարողանան ապահովել "Թեղուտ" ՓԲԸ-ում առաջացած թափոնների յուրաքանչյուր տեսակի պատշաճ և անվտանգ պահումը/տեղադրումը:

Կոմբինատում առաջացող արտադրության և սպառման թափոնների կառավարումը ենթադրում է հետևյալ գործընթացները/փուլերը՝

- Թափոնների առաջացումը,
- Թափոնների հավաքումը և կուտակումը,
- Թափոնների տեղափոխումը պահման և տեղադրման պահեստներ/տեղամասեր,
- Թափոնների պահումը և տեղադրումը,
- Թափոնների հանձնումը մասնագիտացված ընկերություններին:

Թվարկված բոլոր փուլերում Ընկերությունն ապահովում է թափոնների կառավարման հետ կապված բնապահպանական, սոցիալական, աշխատանքի և հրդեհային անվտանգության պայմանները և դրանց պատշաճ գործածության համար սույն ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացվել են կանխարգելիչ և մեղմացնող միջոցառումները:

Հրապարակ №1-ը /Ներքևի ավտոհավաքակայան/ գտնվում է Կոմբինատի պարզեցման լճակից 100 մ հեռավորության վրա՝ դեպի արևելք: Ներքևի ավտոհավաքակայանի մեխանիկական արտադրամասում կազմակերպված է բանեցված յուղերի պահման տեղամասը, իսկ մեխանիկական արտադրամասից ոչ շատ հեռու՝ 130 մ հեռավորության վրա, կառուցված են բանեցված օդաճնշիչ դողերի (փոքր դողերի) և կապարե կուտակիչների պահեստները:

Մեխանիկական արտադրամասը զբաղեցնում է մոտ 800 մ2 մակերեսով տարածք, որտեղ բանեցված յուղերի համար հատկացված է մոտ 20 մ2 տարածք: Մեխանիկական արտադրամասի հատակը բետոնացված է B20 դասի բետոնով և ամրանավորված է ամրանային ցանցով: Արտադրամասի հատակը պատրաստված է անջրաթափանց ու անյուղաթափանց նյութերից՝ օժտված յուղահեռացման համակարգով, որը նախատեսված է վթարային արտահոսքերի դեպքում ստորգետնյա տարողության մեջ յուղերի կուտակման համար:

Բանեցված յուղերը հավաքվում են հերմետիկ փակվող կոնտեյներներում և պահվում են մեխանիկական արտադրամասում՝ հատուկ առանձնացված տարածքում: Մեկ կոնտեյների ընդհանուր ծավալը 1մ3 է, իսկ տարողունակությունը 0.8 տ: Կոնտեյներները տեղադրված են հատուկ մետաղական, ցանցապատված յուղահավաք տակդիրների վրա, որոնք ունեն կոնտեյներների ծավալից 10% ավել ծավալ: Յուղերի հնարավոր ընդարձակման պատճառով

կոնտեյներները լցվում են 5% պակաս ծավալով: Տակդիրներում կուտակված յուղի արտամղումը դեպի կոնտեյներներ իրականացվում է հատուկ պոմպի միջոցով:

Մեխանիկական արտադրամասում իրականացվում է ներքին լուսավորության և վարդակային ցանցի էլեկտրամատակարարում: Տեղամասի օդափոխությունն իրականացվում է արհեստական օդափոխման համակարգով: Արտադրամասն ունի երկաթե ծածկ:

Հակահրդեհային միջոցառումները նախատեսվում է իրականացնել հրդեհաշիջման առաջնային միջոցների՝ կրակմարիչների միջոցով, որոնք տեղադրված են բանեցված յուղերի տարաներից մոտ 4 մ հեռավորության վրա:

Բանեցված յուղերի պահման տեղամասը կահավորված է անհատական պաշտպանության միջոցներով (կիսաճտքավոր ռետինե կոշիկներ, ռետինե ձեռնոցներ, ռետինե գոգնոց, պաշտպանիչ ակնոցներ) և յուղի արտահոսքը լոկալիզացնելու ու հավաքելու հանդերձանքով: Վերջինիս ապահովման նպատակով, պահեստում տեղադրված են յուղի հավաքման համար նախատեսված հավաքածուներ՝ SK-120, SK-240 կամ Spilkleen Absorbent Granules 20LTS SK-03-004 տեսակի բնական արդյունաբերական սորբենտներ:

Մեխանիկական արտադրամասից 130 մ դեպի հարավ-արևելք գտնվում է բանեցված օդաճնշիչ դողերի (փոքր դողերի) և կապարե կուտակիչների պահման տեղամասը, որը 36 մ2 մակերես ունեցող մետաղական շինություն է՝ բաղկացած մետաղական ցանկապատից և տանիքից: Տեղամասը համալրված է 2 կրակմարիչներով, որոնք տեղադրված են բանեցված օդաճնշիչ դողերի և կապարե կուտակիչների պահման տեղամասերի մուտքերի դռների վրա: Տեղամասում օդաճնշիչ դողերի պահումը իրականացվում է իրար վրա դարսված: Բանեցված կապարե կուտակիչների պահումը իրականացվում է ներսից թթվակայուն նյութով պատված մետաղական կոնտեյներներում:

Հրապարակ №2-ը, որը ընդհանուր բաց հրապարակ է, գտնվում է Կոմբինատի պոչամբարի պատվարից 440 մ հեռավորության վրա՝ դեպի հարավ: Հրապարակում կազմակերպվում են "Թեղուտ" ՓԲԸ-ում տեխնոլոգիական սարքավորումների և տրանսպորտային տեխնիկայի նորոգումների և տեխնիկայի սպասարկման աշխատանքների արդյունքում առաջացող մետաղաջարդոնի և շիրարարական աղբի մնացորդների պահման հարթակները: Հրապարակը զբաղեցնում է 2000 մ2 մակերով տարածք, որտեղ մետաղաջարդոնի և շիրարարական աղբի մնացորդների պահումը իրականացվում է բաց եղանակով:

Հրապարակ №3-ը՝ հարստացուցիչ ֆաբրիկան է, որը գտնվում է Կոմբինատի պոչամբարի հարավային հատվածից 450 մ հեռավորության վրա՝ դեպի արևելք: Հարստացուցիչ ֆաբրիկայի տարածքում կազմակերպված է բանեցված յուղերի և սնդիկային լամպերի, դատարկ պարկերի և պլաստիկ թափոնների պահման տեղամաս, որի ընդհանուր մակերեսը 84 մ2 է, որից՝

- Բանեցված յուղերի պահման պահեստ՝ 36 մ2 (6մ x 6մ) տարածք,
- Բանեցված սնդիկային լամպերի պահման պահեստ՝ 12 մ2 (3մ x 4մ) տարածք,
- Դատարկ պարկերի պահման պահեստ՝ 24 մ2 (6մ x 4մ) տարածք,
- Պլաստիկ թափոնների պահման պահեստ՝ 12 մ2 (3մ x 4մ) տարածք:

Տեղամասն ամբողջությամբ կառուցված է չժանգոտող, 0.50-0.80 մմ հաստություն ունեցող ցինկապատ ծալքաթիթեղից, երկաթե ճաղավանդակներից և խողովակներից: Այն ապահովված է բնական օդափոխության համակարգով, հատակը բետոնացված է B20 դասի բետոնով և ամրանավորված է ամրանային ցանցով: Տեղամասի հատակը պատրաստված է անջրաթափանց ու անյուղաթափանց նյութերից: Թափոնների պահման համար նախատեսված պահեստները իրարից առանձնացված են չժանգոտող երկաթե ճաղավանդակներով և ցինկապատ ծալքաթիթեղով: Բանեցված սնդիկային լամպերի պահումն իրականացվում է փակ պայմաններում գտնվող հերմետիկ կոնտեյներներում: Դատարկ պարկերի և պլաստիկ թափոնների պահումն իրականացվում է իրար վրա դարսված վիճակում: Նշված թափոնների գործածության գործունեության համար Ընկերությանը տրամադրվել է ՎԹ 0013-212 լիցենզիան:

Բանեցված յուղերը պահվում են 1000 լ և 0.2 լ տարողությամբ կոնտեյներներում: Կոնտեյներները տեղադրված են հատուկ մետաղական, ցանցապատված յուղահավաք տակդիրների վրա, որոնք ունեն կոնտեյներների ծավալից 10% ավել ծավալ: Յուղերի հնարավոր ընդարձակման պատճառով կոնտեյներները լցվում են 5% պակաս ծավալով: Տեղամասում տեղադրված են յուղի հավաքման համար նախատեսված հավաքածուներ՝ SK-120, SK-240 կամ Spilkleen Absorbent Granules 20LTS SK-03-004 տեսակի բնական արդյունաբերական սորբենտներ:

Հրապարակ №4-ը հանքային տեխնիկայի ավտոհավաքակայանն է, որը տեղակայված է Կոմբինատի պոչամբարի հարավային հատվածից 1 կմ հեռավորության վրա՝ դեպի արևելք: Հանքային տեխնիկայի ավտոհավաքակայանի տարածքում կազմակերպված են բանեցված յուղերի, կապարե կուտակիչների, անվադողերի և յուղի զտիչների պահեստները: Հանքային տեխնիկայի ավտոհավաքակայանի ընդհանուր մակերեսը 13500 մ² է, որից վերը թվարկված թափոնների տեղադրման և պահման համար հատկացված է՝

- Յուղի զտիչների պահման հարթակ՝ 8 մ2 (4մ x 2մ),
- Բանեցված յուղերի պահեստի համար՝ 40 մ2 (4մ x 10մ) տարածք,
- Բանեցված կապարե կուտակիչների պահեստի համար 192 մ2 (8մ x 24մ) տարածք,
- Բանեցված օդաճնշից (մեծ) դողերի բաց պահեստի համար՝ 1000 մ2:

Յուղի զտիչների պահումն իրականացվում է հանքային տեխնիկայի ավտոհավաքակայանի մեքենաների վերանորոգման արտադրամասում՝ մետաղական կոնտեյներների մեջ: Արտադրամասը 1400 մ2 մակերես ունեցող տարածք է: Արտադրամասի հատակը բետոնացված է B20 դասի բետոնով և ամրանավորված է ամրանային ցանցով: Արտադրամասի հատակը պատրաստված է անջրաթափանց ու անյուղաթափանց նյութերից և ունի յուղահեռացման ու յուղահավաքման համակարգ, որտեղից էլ յուղերի թափոնները ուղղվում են դեպի բանեցված յուղերի պահեստ:

Արտադրամասի ներսում իրականացվում է ներքին լուսավորության և վարդակային ցանցի էլեկտրամատակարարում: Տարածքի ներքին լուսավորությունն ապահովում են 150 Վտ հզորությամբ LED լուսատուները: Արտադրամասի օդափոխությունը իրականացվում է արհեստական օդափոխման համակարգով: Շինությունը ունի երկաթե ծածկ: Հանքային տեխնիկայի ավտոհավաքակայանը հագեցած է հրդեհաշիջման առաջնային միջոցներով՝ 80 լ տարողություն ունեցող МИГ ОП-80(з)-АВСЕ-02 մակնիշի կրակմարիչներով:

Յուղի զտիչների պահման համար հանքային տեխնիկայի ավտոհավաքակայանի մեքենաների վերանորոգման արտադրամասում հատկացված է մոտ 8 մ2 մակերեսով տարածք: Յուղի զտիչների յուղազերծման և դրանցից յուղերի արտահոսքը բացառելու նպատակով վերջիններս տեղադրվում են շարժական տակդիրների վրա: Յուղազերծված յուղի զտիչները հավաքվում և տեղադրվում են փակվող տարաների մեջ, ժամանակավոր պահվում են արտադրամասում, որից հետո հանձնվում են լիցենզավորված ընկերությանը:

Բանեցված յուղերի պահեստը գտնվում է հանքային տեխնիկայի ավտոհավաքակայանի մեքենաների վերանորոգման արտադրամասի հարևանությամբ, զբաղեցնում է 40 մ2 տարածք, որտեղ յուղերի պահումը իրականացվում է 26 տ տարողությամբ մետաղական բաքում, որը գտնվում է բետոնե հարթակի վրա տեղադրված երկաթե խորը տակդիրի մեջ և ունի բաքի տարողությունից 10% ավել ծավալ: Պահեստը ունի չժանգոտող, ցինկապատ թիթեղյա տանիք, հողանցված է և ապահովված է արտաքին լուսավորությամբ: Հակահրդեհային միջոցառումները նախատեսվում է իրականացնել հրդեհաշիջման առաջնային միջոցների՝ կրակմարիչների միջոցով, որոնք տեղադրված են երկաթե բաքի անմիջապես հարևանությամբ:

Բանեցված կապարե կուտակիչների պահեստը գտնվում է հանքային տեխնիկայի ավտոհավաքակայանի մեքենաների վերանորոգման արտադրամասից դեպի հարավ՝ 140 մ հեռավորության վրա, զբաղեցնում է 192 մ2 տարածք: Այն իրենից ներկայացնում է փակ, չժանգոտող ցինկապատ թիթեղներից և տանիքից բաղկացած շինություն: Պահեստն ունի բնական օդափոխման համակարգ, արտաքին և ներքին լուսավորություն, ինչպես նաև հագեցած է հրդեհաշիջման առաջնային միջոցներով՝ կրակմարիչներով:

Բանեցված օդաճնշիչ (մեծ) դողերի պահեստը գտնվում է հանքային տեխնիկայի ավտոհավաքակայանի մեքենաների վերանորոգման արտադրամասից դեպի հարավ՝ 190 մ հեռավորության վրա՝ 1000 մ² մակերես ունեցող բաց հրապարակում, որտեղ մեծ օդաճնշիչ դողերի պահումը իրականացվում է բաց եղանակով՝ իրար վրա դարսված:

"Թեղուտ" ՓԲԸ-ում առաջացող արտադրության և սպառման թափոնների մի մասի համար նախատեսված չեն առանձին պահման/տեղադրման պահեստներ: Այդ թափոնները կուտակվում են համապատասխան տարողությունների մեջ այն ստորաբաժանումներում, որոնցում դրանք առաջանում են: Այդ թափոնները սահմանված պարբերականությամբ հանձնվում են լիցենզավորված ընկերություններին վնասազերծման նպատակով, կամ հեռացվում են Կոմբինատից աղբահանող կազմակերպության կողմից: Նշված թափոնները ներառում են՝

- Յուղոտված լաթեր (58200600 01 01 4), որոնք առաջանում են տեխնոլոգիական սարքավորումների և տրանսպորտային տեխնիկայի նորոգումների և տեխնիկական սպասարկման գործընթացի արդյունքում: Քանի որ դրանց քանակը տարեկան կտրվածքով մեծ չէ (0.25 տ/տարի), այն հավաքվում է կենցաղային աղբի տարողություններում/ աղբարկղերում և կենցաղային աղբի հետ խառնված հեռացվում Կոմբինատի տարածքից աղբահանող կազմակերպության կողմից:
- Բժշկական թափոններ, որոնք առաջանում են առողջապահական ծառայությունների արդյունքում (97010600 01 05 4) և գործածված միանվագ ներարկիչներ (97010800 13 05): Այս թափոնները առաջանում են "Թեղուտ" ՓԲԸ-ի բուժկետում՝ աշխատողներին բժշկական օգնություն ցուցաբերելու կամ անձնակազմի պարբերական բուժ.զննումների ընթացում: Օգտագործված բժշկական օգնության և բուժ.զննումների միջոցները և պարագաները հատուկ եղանակով փաթեթավորվում են, տեղադրվում պլաստիկ արկղերի մեջ և պարբերաբար (սահմանված ժամանակահատվածներով) հանձնվում լիցենզավորված կազմակերպությանը՝ վնասազերծման նպատակով:
- Եռակցման խարամ (31404800 01 99 4), որն առաջանում է "Թեղուտ" ՓԲԸ-ում շինարարական, վերանորոգման և տեխնիկական սպասարկման աշխատանքների իրականացման ժամանակ՝ եռակցման արդյունքում: Քանի որ առաջացած խարամի քանակը տարեկան կտրվածքով մեծ չէ (0.1 տ/տարի), այն սառչելուց հետո հավաքվում է կենցաղային աղբի տարողություններում/ աղբարկղերում և կենցաղային աղբի հետ միասին հեռացվում Կոմբինատի տարածքից աղբահանող կազմակերպության կողմից
- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ /բացառությամբ խոշոր եզրաչափերի (91200400 01 00 4), որն առաջանում է Կոմբինատի աշխատողների կենսագործունեությունից և մասամբ արտադրական գործընթացից: Հավաքվում է աղբարկղերի մեջ և պարբերաբար հեռացվում Ընկերության տարածքից աղբահանող կազմակերպության կողմից:

Ընկերության արտադրական տարածքը կահավորված է անձրևաջրերի հեռացման համակարգով: Կոմբինատի արտադրական հրապարակներում առաջացող անձրևաջրերը նավթամթերքներից և կոշտ դիսպերսային խառնուկներից մաքրելու նպատակով ուղղվում են "WAVIN-LABKO" ինքնավար մաքրման կայան (մաքրման կայանի անձնագիրը ներկայացված է ՇՄԱԳ-ի Հավելվածում), որից հետո ուղղվում են պոչամբար, այնուհետև անձրևաջրերը պոչամբարի պարզվածքի հետ միասին ուղղվում են տեխնոլոգիական գործընթաց՝ հարստացուցիչ ֆաբրիկա:

"Թեղուտ" ՓԲԸ-ի օժանդակությամբ 2009-2017թթ. հանքավայրի տարածքում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախմբի (ղեկավար՝ Ս. Հոբոսյան) կողմից իրականացված պեղումների ընթացքում հայտնաբերվել են հնագիտական օբյեկտներ, որոնց պահպանության համար նախատեսվել են հատուկ միջոցառումներ /պարսպապատում, ապակեպատում/: Հնագիտական արշավախմբի կողմից իրականացված տեղազննության արդյունքի համաձայն թափոնների հրապարակների շրջակայքում մշակութային շերտեր և հուշարձաններ չեն հայտնաբերվել, ուստի Կոմբինատի թափոնների

պահման/տեղադրման չորս հրապարակները մշակութային ժառանգության պահպանության համար որևէ վտանգ չեն ներկայացնում:

ՇՄԱԳ գործընթացում ուսումնասիրվել և գնահատվել է նախատեսվող գործունեության շրջանակներում իրականացվող աշխատանքներից և միջոցառումներից ակնկալվող դրական կամ բացասական ազդեցությունների ներգործության աստիճանը՝ ֆիզիկական, կենսաբանական և սոցիալական միջավայրերի վրա: Գործող կոմբինատի օբյեկտների տակ հատկացված տարածքն արդեն իսկ խախտված է լեռնակապիտալ, շինարարական և հանքարդյունահանման աշխատանքներից և սույն նախագծի իրականացնումը չի նախատեսում հողածածկ և բուսածածկ տարածքների լրացուցիչ խախտում: Քանի որ վերոնշյալ թափոնների պահման և տեղադրման պահեստների ազդեցության գոտին տեղային է և բացակայում են ազդեցության այնպիսի աղբյուրներ (օրինակ՝ մթնոլորտային արտանետումներ, ջրային և հողային ռեսուրսների աղտոտումներ և այլն), որոնք կարող են տարածվել Կոմբինատի սահմաններից դուրս, ուստի որպես ազդեցության գոտի (ուղղակի և անուղղակի) դիտարկվել է զուտ "Թեղուտ" ՓԲԸ-ի տարածքը:

Քանի որ թափոնների պահման համար նախատեսված պահեստներն արդեն իսկ կառուցված են, հետևաբար, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացում շինարարության փուլի աշխատանքներ չի դիտարկվել: ՇՄԱԳ-ում գնահատման է ենթարկվել թափոնների հետ գործածության, ներառյալ՝ պահման և տեղադրման պահեստների շահագործման փուլը:

Կոմբինատում արտադրական և սպառման թափոններից առաջացող մթնոլորտային արտանետումների հիմնական աղբյուրները ներառում են՝

- Թափոնների պահման պահեստները,
- Շին. աղբի հարթակ:
- Բանեցված յուղերի պահման պահեստ,
- Բանեցված կուտակիչների պահման պահետստ,
- Փոխադրող տեխնիկան/բեռնատարները:

Պայմանավորված թափոնների ֆիզիկա-քիմիական և սպառողական հատկություններով, մթնոլորտային արտանետումներ հնարավոր են բանեցված յուղերի պահման տեղամասերից/բաքից՝ յուղային գոլորշիների, բանեցված կուտակիչների պահման տեղամասից՝ ծծմբական թթվի գոլորշիների տեսքով և շինարարական աղբի հարթակից՝ փոշու տեսքով:

Կոմբինատի արտադրության և սպառման թափոնների պահման, տեղադրման և տեղափոխման աշխատանքների իրականացման ընթացքում վնասակար նյութերի գումարային արտանետումների տարեկան քանակները արտանետումների աղբյուրներից ներկայացված են ստորև.

Չափման միավորը	Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը						
	Փոշի	Ածխածնի օքսիդ	Ազոտի օքսիդներ	CH+N2O+ՑՕՄ (այսուհետ CH)	ՊՄ	SO2	Յուղեր
տ/տարի	0.000012	0.1388	0.0674	0.01412	0.0068	0.00637	0.000018
գ/վ	0.000028	0.1927	0.0935	0.01965	0.0095	0.003	0.00000061

Մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների քանակական արդյունքների համաձայն Կոմբինատի արտադրության և սպառման թափոնների պահման, տեղադրման և տեղափոխման աշխատանքների ժամանակահատվածում տարեկան մթնոլորտ կարտանետվի մոտ 0.2335 տ ընդհանուր քանակով վնասակար նյութ, ինչը շատ փոքրածավալ է և էական ազդեցություն/ աղտոտում շրջակա միջավայրի վրա չի ունենա:

Ընդամենը "Թեղուտ" ՓԲԸ-ում առաջացող թափոնների պահման/տեղադրման տեղամասերի կազմակերպման աշխատանքների արդյունքում շրջակա միջավայրին հասցվող

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

տնտեսական վնասը դրամային արտահայտմամբ գնահատվել է 15000 դրամ /ներառում է միայն մթնոլորտային օդին հասցվող վնասը, քանի որ հողային և ջրային ռեսուրսներին վնաս չի հասցվում/:

"Թեղուտ" ՓԲԸ գործունեությունից առաջացող արտադրության և սպառման թափոնների կուտակման/հավաքման, մինչև պահման և տեղադրման տեղամասեր/պահեստներ դրանց տեղափոխման աշխատանքներն իրականացվում են Կոմբինատի անձնակազմի կողմից: Թափոնների պահման և տեղադրման տեղամասերի/պահեստների աշխատողների կոմունալ-տնտեսական ջրապահանջը երկու աշխատողի համար կկազմի՝ տարեկան 18.29 մ3: Սպասարկող աշխատողների կողմից առաջացող կեղտաջրերը կկազմեն 18.0 մ3: "Թեղուտ" ՓԲԸ-ում առաջացող կեղտաջրերը մաքրվում են "БиОКС" մակնիշի կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայաններում, իսկ մաքրված նորմատիվ մաքուր պարզվածքը թափվում է Շնող գետը:

Բացառությամբ շինարարական աղբի և սև մետաղի ջարդոնի, որոնք տեղադրվում են բաց հարթակներում, "Թեղուտ" ՓԲԸ-ում առաջացող մնացած թափոնների պահման և տեղադրման տեղամասերը/պահեստները ծածկված են, ինչի շնորհիվ անձրևաջրերի մուտքը և ներգործությունը դրանցում պահվող թափոնների վրա և արդյունքում նաև ներթափանցումը հողային ռեսուրսներ գրեթե անհնար է: Հողային ռեսուրսների աղտոտումը հնարավոր է բանեցված յուղերի կոնտեյներների, բաքի, յուղոտված լաթերի և բանեցված զտիչների կուտակման տարողությունների հնարավոր վթարից առաջացող արտահոսքերի արդյունքում: Նման դեպքերը բացառելու նպատակով Կամբինատը ձեռնակել է մի շարք կանխարգելիչ միջոցառումներ, այդ թվում՝

1. Բանեցված յուղերի կոնտեյներները պահվում են տակդիրների վրա,
2. Բանեցված յուղերի պահման բաքը (26 տ տարողությամբ) հագեցած է երկաթե տակդիրով, որում՝ հնարավոր արտահոսքի դեպքում, հավաքվում է յուղը՝ բացառելով դրա թափանցումը շրջակա միջավայր,
3. Տակառների մեջ յուղերի լցման և դատարկման աշխատանքները իրականացնելու ժամանակ օգտագործվում են հատուկ շարժական տակդիրներ, որոնք թույլ են տալիս անվնաս և ապահով տեղափոխել յուղը՝ բացառելով յուղի արտահոսքերը,
4. Կապարե կուտակիչներից արտահոսքերը բացառելու նպատակով դրանց պահումը իրականացվում է ներսից թթվակայուն նյութով պատված մետաղական կոնտեյներներում,

Բացի վերը նշվածից բանեցված յուղերի պահման տեղամասերը հագեցած են յուղի արտահոսքը լոկալիզացնելու ու հավաքելու պարագաներով: Վերջինիս ապահովման նպատակով, տեղամասերում առկա են յուղերի հավաքման համար նախատեսված հավաքածուներ, մասնավորապես SK-1100 կամ "Spill-Sorb" տեսակի բնական արդյունաբերական աբսորբենտ:

Քանի որ նախատեսվող գործունեությանը չի ենթադրում գործող օբյեկտների տարածքների ընդլայնում, հետևաբար՝ բուսածածկ տարածքների լրացուցիչ խախտումներ, ուստի պետք է փաստել, որ նախատեսվող գործունեության շրջանակներում բուսական և կենդանական աշխարհի վրա ազդեցություն չի դիտվի:

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Բանեցված յուղերի, յուղոտված լաթերի ու զտիչների, բանեցված դողերի պահման տեղամասերն ապահովել հիդեհաշիջման նորմերի համապատասխան հաշվարկված կրակմարիչներով և այլ հրդեհաշիջման առաջնային միջոցներով:
- Արտադրության և սպառման թափոնները տեղափոխող մեքենաները կահավորել կրակմարիչներով,

Թափոնների տեղամասերը/պահեստները սպասարկող անձնակազմը ապահովված լինի անհատական պաշտպանության միջոցներով: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժողին տեղափոխել Կոմբինատի բուժկետ, որտեղ նրան կցուցաբերվի առաջին բժշկական օգնություն:

Ելնելով գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա կանխատեսվող ազդեցություններից, ՇՄԱԳ հաշվետվությունում առաջարկվել է Կոմբինատի տարածքում առաջացող թափոնների պահման և տեղադրման գործունեության բնապահպանական միջոցառումների ծրագիր և Բնապահպանական և աշխատանքի անվտանգության վիճակի մշտադիտարկման ծրագիր, որոնցում ներառվել են կանխարգելիչ և մեղմացնող միջոցառումները, մշտադիտարկումները, դրանց պարբերականությունը, իրականացման վայրերը և այլն:

Շրջակա միջավայրի պահպանության, այդ թվում նաև թափոնների թափոնների պահման և տեղադրման տեղամասերի շրջակայքում մշտադիտարկման ծախսերը 2020 թվականի համար կազմել են 21.532.800 ՀՀ դրամ/տարի, որի 15 %-ը՝ թափոններին ուղղված մասնաբաժինն է:

Պատճառաբանական մաս. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Լոռու մարզի Շնող համայնքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, առողջապահության, արտակարգ իրավիճակների նախարարություններից և Լոռու մարզպետարանի կողմից ստացված կարծիքները ևս հաշվի են առնվել:

Վերլուծելով և ամփոփելով ՇՄԱԳ հաշվետվության գնահատման և փորձաքննության արդյունքները, կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեությունն ունի իր կարևորությունը բնապահպանական տեսանկյունից: Ընկերության կողմից նախատեսվող գործունեությունը կարևոր է թափոնների կառավարման տեսանկյունից և կնպաստի Ընկերության արտադրական գործընթացում առաջացող թափոնների կառավարման հետ կապված շրջակա միջավայրի խնդիրների լուծմանը: ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված միջոցառումների իրականացման արդյունքում աղտոտվածությունը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

1. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:
1. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ղեկավարվել առողջապահության նախարարի 2012 թ. սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:
2. Կոմբինատում առաջացող թափոնների պահման և տեղադրման տեղամասերի/ պահեստների ազդեցության գոտիներում բնապահպանական մշտադիտարկումներն իրականացնել ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

3. Թափոնների պահման/տեղադրման տեղամասերում անհրաժեշտ է ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան ապահովել՝ հակահրդեհային, աշխատանքի անվտանության ապահովման միջոցառումներն և տեխնիկական լուծումները, ինչպես նաև ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացումը՝ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցից միջոցառումներ՝ թափոնների գործածությանը ներկայացվող բնապահպանական նորմերը և պահանջները պարտադիր կարգով ապահովելու համար:
4. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ վտանգավոր թափոնների գործածության լիցենզիա:
5. Գործունեության ընթացքում առաջացող թափոնների համար սահմանված կարգով մշակել թափոնի անձնագիր, համաձայնեցնել այն շրջակա միջավայրի նախարարության հետ և թափոնի տեղադրումն իրականացնել ըստ անձնագրի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Թեղուտ» ՓԲԸ կողմից ներկայացված Ընկերության տարածքում առաջացող թափոնների պահման/տեղադրման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Հ. Մկրտչյան

Ընդամենը՝ 10 էջ